Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորական ուղերձը Մայրության և գեղեցկության տոնի առթիվ

Սիրելի՛ մայրեր և կանայք, Ապրիլի 7-ը մեր ազգային տոնացույցում առանձնահատուկ օր է՝ նվիրված Մայրությանը և բնությունից շնորհված գեղեցկությանը:

Այս օրը ևս մեկ հնարավորություն է՝ երախտագիտությամբ խոնարհվելու յուրաքանչյուր մոր առջև, ով սիրով, հոգատարությամբ ու անսահման նվիրումով շեն է պահում հայ ընտանիքը, դաստիարակում սերունդներ և ջերմություն է սփռում ամենուր:

Մարտունու համայնքապետարանի անունից սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ այս գեղեցիկ տոնի կապակցությամբ: Ցանկանում եմ, որ ձեր կյանքը լցված լինի լույսով, սիրով և գարնան բույրով: Թող ձեր ժպիտը երբեք չպակասի, իսկ ձեր սիրտը բաբախի երջանկության, խաղաղության ու ներդաշնակության ռիթմերով:

Շնորհակալ ենք այն ամենի համար, ինչ անում եք ընտանիքների ու մեր համայնքի բարօրության համար:

Սիրով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի
Մարտունի համայնքի ղեկավար
Հովհաննես Հովեյան